

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Սամվել Զալիբեկի Կրոյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատումը հողերի անթրոպոգեն փոփոխությունների ուսումնասիրությունների արդյունքներով» Ե.23.06-«Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատումը կարևոր դեր ունի հողային ռեսուրսների կառավարման, հողային հարաբերությունների կարգավորման և կադաստրային համակարգի արդյունավետ աշխատանքի համար: Այն հիմնված է հողի բերրիության, ֆիզիկական ու որակական հատկությունների, ինչպես նաև բնական, տնտեսական պայմանների համալիր վերլուծության վրա: Հայաստանում գյուղատնտեսական հողերի կադաստրային շրջանացումն ու գնահատումը հանդիսանում են պետական առաջնահերթություն՝ պայմանավորված հողերի կայուն կառավարման և արդյունավետ օգտագործման անհրաժեշտությամբ: Հիմնախնդրի նմանատիպ ձևակերպման մեջ կարևոր առանձնահատկություն է համարվում մարդածին ազդեցությունների նվազեցումը և հողային ռեսուրսների պահպանությունը: Կադաստրային գնահատման համար օգտագործվում են հողի որակական և քանակական ցուցանիշներ, իսկ տարբեր նպատակային նշանակության հողերի համար կիրառվում են տարբեր մեթոդաբանական մոտեցումներ: Գյուղատնտեսական հողերի գնահատման հիմքում ընկած են հողերի բոնիտման տվյալները, որոնք կիրառվում են հողի արժեքի, հարկի և վարձավճարի հաշվարկման համար: Այս տվյալները կարևոր են հողի շուկայական արժեքի գնահատման, հողերի արդյունավետ օգտագործման և պետական վերահսկողության իրականացման համար: Ուստի ոլորտում գիտական հետազոտությունների իրականացումը և գնահատման գործընթացների կատարելագործումը մնում են արդիական և կարևոր խնդիր:

Գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը

Ատենախոսության գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը պայմանավորված է հեղինակի կողմից ձևակերպված խնդիրների լուծման մեթոդոլոգիայով, ստացված արդյունքների վերլուծությամբ և գնահատմամբ: Ատենախոսական աշխատանքում մշակվել է հանրապետությունում հողերի կադաստրային շրջանացման և ագրոարտադրական խմբավորման արդիականացված նոր սխեմա, որը թույլ է տվել ստացված արդյունքները քարտեզագրել: Հողերի կադաստրային գնահատման սխեմայի մեջ հաշվի են առնվել ծանր մետաղներով (ՇՄ) աղտոտվածությունը, հողի բերրիությունը պայմանավորող հիմնական հատկությունների փոփոխությունները, կապված մարդածին ազդեցություններով: Իրականացվել է հողերի որակական գնահատում, որի համար կազմվել են խմբավորման սանդղակներ, որոնք գնահատվել են 0-100 բալ համակարգով: Որակական գնահատման ցուցանիշների հիման վրա կատարվել է հողերի տնտեսական գնահատում հողի գնի, հարկի վարձավճարի և այլ տնտեսական ցուցանիշների հաշվարման և գնահատման համար: Կատարվել է հողատեսակների դասակարգում և անվանակարգում՝ համաձայն հողերի միջազգային դասակարգման WRB համակարգի, որի արդյունքում 14 հողատիպեր միավորվել են 9 ռեֆերատիվ խմբերում: Այս աշխատանքները թույլ են տվել հեղինակին կազմելու Հայաստանի Հանրապետության հողերի և դեգրադացված տարածքների թվային քարտեզներ՝ կիրառելով միջազգային նոր ստանդարտներ: Ատենախոսության եզրահանգումները բխում են ատենախոսության գիտական նորույթից և հիմնադրույթներից: Դրանց ճշտությունը և հիմնավորվածությունը կասկած չեն առաջացնում, քանի որ դրանք ստացվել են հողերի կադաստրային գնահատման արդի մեթոդներով և եղանակներով: Ատենախոսության 11 եզրակացությունները տրամաբանական կապի մեջ են գիտական նորույթի և հետազոտության արդյունքների հետ, իսկ գիտական եզրահանգումների գիտագործնական արժանահավատությունը բխում է արտադրության մեջ կատարված 10 գործնական առաջարկների բովանդակությունից:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնավորման աստիճանը

Ատենախոսության գիտական նորույթը հմնավորված է տեսական և գործնական հետազոտությունների արդյունքներով: Ներկայացված գիտական նորույթը հնարավորություն է տալիս բացահայտել մի շարք կարևոր օրինաչափություններ և կատարել եզրակացություններ, որոնք թույլ են տալիս ոչ միայն հիմնավորված լուծել կիրառական խնդիրներ, այլև օգտագործվել հողերի դասակարգման, ագրոարտադրական և հողակադաստրային գնահատման նոր հետազոտությունների պլանավորման և իրականացման ընթացքում:

Հայաստանի Հանրապետության հողերի բերրիության բարձրացման և պահպանության համար աշխատանքում ներկայացվել են հանրապետության հողերի դասակարգման և անվանացանկի նոր մոտեցումներ, գնահատվել են չմշակվող հողերի կառուցվածքային առանձնահատկությունները, գնահատվել են հողում հումուսի ժամանակային փոփոխության հիմնական պատճառները և այն գործընթացները, որոնք թե մարդկային և բնական ծագումով ունենում են մեծ ազդեցություն հողերի դեգրադացիայի վրա:

Ուսումնասիրություններով բացահայտվել են հողերի ծանր մետաղներով աղտոտվածության հիմնական պատճառները, հողօգտագործման համակարգի ազդեցությունը սննդատարերի տեղաշարժի, հումուսի հաշվեկշռի, հողերի արտադրողականության և ջրաֆիզիկական հատկությունների վրա:

Իրականացված համապարփակ հետազոտությունները թույլ են տվել մշակել հանրապետության հողերի կադաստրային շրջանացման և խմբավորման արդիականացված տարբերակ՝ հաշվի առնելով գյուղատնտեսության առանձնահատկությունները:

Գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման ոլորտում բացահայտվել են մի շարք առանձնահատկություններ, որոնք առաջնային պլան են մղում հողերի կադաստրային գնահատման գոտիների դերը վերջնարդյունքների վրա: Տրվել են ընդհանրական եզրակացություններ շուկայական և կադաստրային արժեքների մասին կապված վարչատարածքային միավորների առանձնահատկություններից:

Բարձր գնահատելով ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական

նշանակությունը, հարկ է նշել, որ այն գերծ չէ թերություններից և բացթողումներից, որոնք ներկայացված են ստորև բերվող դիտողություններում:

1. Ատենախոսության էջ 28-ում ներկայացված է ՀՀ հողային ծածկույթի քարտեզը և ներկայացված է , որ այն կազմված է հեղինակի կողմից, ցանկալի կլիներ, իմանալ որն է այս քարտեզի տարբերությունը համեմատած գոյություն ունեցող հողային ծածկույթի քարտեզներից:
2. Ատենախոսության մեջ նշվում է, որ ՀՀ հողատիպերը խմբավորվել են 9 ռեֆերատիվ խմբերում, սակայն էջ 32-ում ներկայացված քարտեզում պայմանական նշաններում այն 10-ն է, ինչումն է այդ տարբերության պատճառը:
3. Հողերի որակական գնահատման նպատակով ներկայացվել խմբավորման սանդղակներ, ցանկալի կլիներ պարզաբանել դրանց տարբերությունը գոյություն ունեցող գնահատման սանդղակների հետ:
4. Հողերի բացասական հատկությունները հաշվի առնող ուղղման գործակիցների որոշման մեթոդաբանությունը կարծում ենք կարիք կա հիմնավորելու:
5. Հողերի կադաստրային գնահատման նոր մոտեցումներում հեղինակը կարևորում է ագրոլանդաֆտային գոտիներում հողերի դեգրադացիայի գնահատումը, սակայն աշխատանքում դեգրադացման մեթոդաբանության գնահատման կամ դրա չեզոքացման համար գործնական և տեսական հետազոտությունները ոչ լիարժեք են լուսաբանված:
6. Սեղմագրի (3) բանաձևի համարիչի արտահայտությունը, (4)-րդ բանաձևը, պետք է ընդգրկել փակագծի մեջ, հակառակ դեպքում դրանք կորցնում են իմաստը, բերված քարտեզներից շատերը անընթեռնելի են, (5)-դ բանաձևում առկա է 1,07 գործակից, որի հիմնավորումը պարզ չէ :

Ատենախոսության համապատասխանությունը կանոնակարգի պահանջներին

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և առաջարկություններից, ընդհանուր եզրակացություններից և

առաջարկություններից, 208 անվանումով գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 234 էջի վրա, տեքստը լուսաբանված է 65 նկարով և 38 աղյուսակով: Հրատարակված է 35 գիտական հոդված, որից 9-ը Scopus-ի 2 Web of Science շտեմարաններում: Սեղմագիրը բավարար չափով արտացոլում է ողջ աշխատանքի նպատակներն, գիտական նորույթը ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսության սեղմագիրը կազմված է պահանջվող չափանիշներին համապատասխան և այն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները, գիտական նորույթը և եզրակացությունները: Հետազոտություններին իրականացնելիս ատենախոսը ցուցաբերել է դիտարկվող հարցերի խորը իմացություն, խնդիրները ձևավորելու և լուծելու մասնագիտական պատրաստվածություն և վերլուծական անհրաժեշտ մակարդակ: Բոլոր հոդվածները հրատարակված են ԲՈԿ կողմից ընդունված գիտական տեղեկագրերում: Եզրակացությունները բխում են ատենախոսական աշխատանքի գիտական նորույթից, տեսական և դաշտային հետազոտությունների արդյունքներից: Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքները կարել է կիրառել հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման հիմնախնդիրների լուծման ոլորտում:

Եզրակացություն

Ամփոփելով Սամվել Զալիբեկի Կրոյանի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատումը հողերի անթրոպոգեն փոփոխությունների ուսումնասիրությունների արդյունքներով» թեմայով ատենախոսական աշխատանքի ամբողջական բովանդակությունը, գտնում ենք, որ ներկայացված ատենախոսական աշխատանքը կատարված է տեսական, գործնական և մեթոդական բարձր մակարդակով, այն իր հետազոտության արդյունքներով, գիտական նորույթով, եզրակացություններով և արտադրությանն արված առաջարկություններով նպատակամղված է լուծելու Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման հիմնախնդիրները: Գտնում են, որ

Սամվել Զալիբեկի Կրոյանի դոկտորական ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է ՀՀ-ում ԲՈԿ -ի կողմից աստիճանաշնորհման կանոնակարգի 8-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Սամվել Զալիբեկի Կրոյանը, արժանի է Ե.23.06-«Գեոդեզիա, ներառյալ քարտեզագրություն և կադաստր» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս

ՀԱԱՀ Զրային և հողային ռեսուրսների կառավարման
ամբիոնի վարիչ, գյուղատնտեսական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գ.Մ.Եղիազարյան

Գ.գ.դ., պրոֆեսոր Գ.Մ.Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ ՀԱԱՀ
գիտական քարտուղար, գ.գ.թ. ղոցենտ

Գ.Ավագյան

30.04.2026 թ.